Կարծիք

Աննա Հրանտի Ավետիսյանի «Բողոքի արտահայտման լեզվագործաբանական առանձնահատկությունները հայերեն և անգլերեն համացանցային խոսույթում» Ժ. 02.02 - Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Լեզվի փոփոխությունը թերևս այն եզակի լեզվական ընդհանրույթներից մեկն է, որ կարելի է իրավմամբ անվանել բացարձակ: Լեզուն ենթարկվում է փոփոխությունների բոլոր ժամանակներում, սակայն մեր օրերում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համատեքստում լեզուների փոփոխությունները անհամեմատ ավելի արագ են ընթանում և նկատելի են դառնում նունիսկ ոչ լեզվաբանների համար: Այսպիսով, անժխտելի է այն փաստը, որ համացանցային լեզվի ուսումնասիրությունները առավել մեծ կարևորություն են ստանում, քանի որ դրանք կարող են բացահայտել ոչ միայն լեզվական փոփոխությունները, այլ նաև կարող են օգնել վերլուծելու և վերահսկելու տեղեկատվական բազմաթիվ հոսքերը: Այս առումով սոցիալական կայքերի խոսքային ակտերի ուսումնասիրությունը անշուշտ կարևոր է և հետաքրքրական: Վերջին տարիներին սոցիալական ցանցերը դարձել են նաև բողոքի և քննադատության արտահայտման յուրօրինակ հարթակ՝ ներկայացնելով նմանատիպ խոսքային ակտերի մեծ բազմազանություն:

Պաշտպանության ներկայացված ատենախոսության նպատակն է ուսումնասիրել բողոքի արտահայտման լեզվագործաբանական, ինչպես նաև մշակութային առանձնահատկությունները հայերեն և անգլերեն համացանցային խոսույթում:

Հետազոտությունը իրականացված է Ֆեյսբուք սոցիալական ցանցում հայալեզու և անգլալեզու սպասարկման ոլորտի տարբեր կազմակերպությունների հրապարակումների ներքո տեղ գտած բազմաթիվ (1000 առցանց գրառում) մեկնաբանությունների հիման վրա:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Բողոքի լեզվագործաբանական ուսումնասիրության տեսական հիմնադրույթները» վերտառությամբ, ատենախոսը

ներկայացնում է հետազոտության տեսական դրույթներն ու խոսքային ակտերի դասակարգումները՝ շեշտադրելով համացանցային խոսույթի առանձնահատկությունները բողոքի արտահայտման համատեքստում:

Երկրորդ գլխում, որը վերնագրված է «Բողոքի արտահայտման հաղորդակցական կաղապարի գործաբանական առանձնահատկությունները հայերեն և անգլերեն համացանցային խոսույթում», հեղինակը զուգադրում և քննում է բողոքի խոսքային ակտը՝ ուսումնասիրելով հայերեն և անգլերեն հրապարակումներում պերլոկուտիվ ազդեցության առանձնահատկությունները:

Երրորդ գլխում, որն ատենախոսը վերնագրել է «Բողոքի արտահայտման լեզվամշակութային առանձնահտկությունները հայերեն և անգլերեն համցանցային խոսույթում», շեշտադրվում է բողոք արտահայտող հրապարակումների նմանություններն ու տարբերությունները, որոնք պայմանավորված են վերջիններիս մշակույթով, ինչպես նաև անդրադարձ է կատարվում քաղաքավարության ռազմավարությունների և հումորի կիրառման մշակութային տարբերություններին:

Եզրակացության մեջ ներկայացված են հետազոտության արդյունքները և եզրահանգումները:

Հանրային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը միանգամայն ինքնուրույն և արժեքավոր ուսումնասիրություն է: Հեղինակը պատասխանատու և մանրակրկիտ ձևով ուսումնասիրել է հետաքրքրություն առաջացնող մեծաքանակ փաստական նյութ, ինչն անշուշտ գովելի է: Աշխատանքը գրված է պատշաճ գիտական մակարդակով:

Այնուամենայնիվ, բնավ չցանկանալով նսեմացնել աշխատանքի արժեքն ու նշանակությունը, կցանկանայինք ներկայացնել մի քանի դիտարկումներ և առաջարկներ.

1. Ատենախոսը իր աշխատանքի նորույթը պայմանավորում է այն հանգամանքով, որ առաջին անգամ փորձ է արվել ոչ միայն զուգադրական վերլուծություն իրականացնել հայերեն և անգլերեն համացանցային խոսույթում հասանելի բողոքի արտահայտման ձևերի միջև, այլև տարորոշել բողոքի արտահայտման առանձնահատկությունները (էջ 4): Ցանկալի կլիներ, որպեսզի նորույթը ներկայացվեր ավելի հստակ, քանի որ տվյալ ձևակերպումը կարող է անորոշություններ առաջացնել:

2. Ներածության մեջ ատենախոսը նշում է, որ բողոքի լեզվագործաբանական հայեցակերպի ուսումնասիրությունը թույլ է տալիս ձևավորել արդյունավետ հաղորդակցության կաղապար, որի կիրառումը կարող է նպաստել լեզվաբանական հարակից այլ ոլորտների զարգացմանը (էջ 4): Կցանկանայինք, որպեսզի ատենախոսը ավելի մանրամասն ներկայացներ, թե ինչ ի նկատի ունի խոսելով արդյունավետ հաղորդակցական կաղապարի մասին և ինչպես և որ ոլորտներին այն կարող է նպաստել իրենց զարգացման ընթացքում:

3. Առաջին գլխում ատենախոսը գրում է, որ վերջին տարիներին համացանցում, մասնավորապես՝ սոցիալական հարթակներում, գերակշիռ մաս են կազմում բողոք արտահայտող գրառումները (էջ 9) : Արդյո՞ք կարելի է պնդել, որ համացանցում գերակշռում են բողոք արտահայտող գրառումները և կա՞ն արդյոք այս միտքը հիմնավորող ուսումնասիրություններ:

4. Ատենախոսը իր աշխատանքը կատարելիս հիմնվում է գործաբանական վերլուծության վրա, սակայն ատենախոսության վերնագիրը ենթադրում է նաև հայերեն և անգլերեն համացանցային խոսույթի առանձնահատկությունների տիպականացում:

Նշված կետերը ամենևին չեն նսեմացնում ատենախոսության արժեքը. և Աննա Հրանտի Ավետիսյանի «Բողոքի արտահայտման լեզվագործաբանական առանձնահատկությունները հայերեն և անգլերեն համցանցային խոսույթում» ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հոդվածներն ու սեղմագիրը արտացոլում են վերջինիս հիմնական բովանդակությունը: Ասվածը հիմք է տալիս ինձ միջնորդել գիտական աստիճան շնորհող 059 մասնագիտական խորհրդի առջև Աննա Հրանտի Ավետիսյանին շնորհելու հայցվող աստիճանը 10.02.02. – (Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն) մասնագիտության գծով:

Ք. Մ. Հարությունյան

բ.գ.թ. դոցենտ

Հաստատում եմ բ.գ.թ. դոցենտ

Ք. Մ. Հարությունյանի ստորագրությունը

ԵՊՀ գիտքարտուղար Մ. Հովհաննիսյան

11.01.24